ПРОТОКОЛ N 9

заседания оценочной комиссии процедуры закупки под кодом «DD-GHAShDzB-23/03», организованной с целью приобретения текущих ремонтных работ зданий, строений для нужд Судебного департамента

г. Ереван «26» июля 2023г.

Время: 15:00

Участвовали:

председатель комиссии:

Артур Асатрян - временно исполняющий обязанности начальника управления материально-технического обеспечения и координации закупок Судебного департамента (ответственный за закупку/руководитель оценочной комиссии **ОЗ/РОК**)

члены комиссии:

Норайр Агамалян - временно исполняющий обязанности начальника отдела материально-технического обеспечения управления материально-технического обеспечения и координации закупок Судебного департамента (ответственный за закупку/ персонал по оценке - **ОЗ/ПО**)

Армен Аветисян - инженер-строитель отдела материально-технического обеспечения управления материально-технического обеспечения и координации закупок Судебного департамента (ответственный за закупку/ персонал по оценке - **ОЗ/ПО**)

Тигран Зейналян - временно исполняющий обязанности главного специалиста отдела материально-технического обеспечения управления материально-технического обеспечения и координации закупок Судебного департамента (ответственный за закупку/ персонал по оценке - **ОЗ/ПО**)

Андраник Абгарян - временно исполняющий обязанности ведущего специалиста отдела материально-технического обеспечения управления материально-технического обеспечения и координации закупок Судебного департамента (ответственный за закупку/ открывающий персонал - **ОЗ/ОП**)

Вардан Карапетян - инженер-строитель отдела материально-технического обеспечения управления материально-технического обеспечения и координации закупок Судебного департамента (ответственный за закупку/ открывающий персонал - **ОЗ/ОП**)

секретарь комиссии:

Арус Хачатрян - главный специалист отдела координации закупок управления материально-технического обеспечения и координации закупок Судебного департамента (ответственная за закупку/координатор процедуры - **ОЗ/КП**)

Информация о принятом оценочной комиссией решении в рамках процедуры закупки под кодом «DD-GHAShDzB-23/03»:

В ответ на письмо Судебного департамента номер ԴԴ-1 ԴԴ/1290-23 Ե-5199 от 11.07.2023г. (прилагается), от 25.07.2023г. из Министерства финансов РА получено письмо N 03/26-1/14268-2023 (прилагается).

Рассмотрев полученное из Министерства финансов РА письмо, оценочная комиссия решила оставить без изменений результаты оценки соответствия заявок, поданных всеми участниками процедуры закупки под кодом «DD-GHAShDzB-23/03», требованиям приглашения, на сайте, действующем по адресу www.procurement.am, переопубликовать утвержденное решением оценочной комиссии от 27.06.2023г. объявление о решении заключения договора, периодом ожидания установив период со дня, следующего за днем переопубликования объявления, до 10-го календарного дня включительно.

Принято решение: за-6, против-0

Председатель комиссии: _____ Артур Асатрян

Члены: _____ Норайр Агамалян

_____ Армен Аветисян

_____ Тигран Зейналян

_____ Андраник Абгарян

_____ Вардан Карапетян

Секретарь: _____ Арус Хачатрян

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0009 ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-771, www.court.am

№ ԴԴ-1 ՄՄ/1290-23 Ը-5199

«11» հուլիսի 2023թ.

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավանեսյան,

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակում առաջացել է մեթոդական օժանդակություն ստանալու անհրաժեշտություն և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ խնդրում ենք տրամադրել մեթոդական օժանդակություն հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. «Խաչատրյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է՝ հաշվի առնելով, որ «Խաչատրյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանել հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ բաժնում սահմանված է, որ կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, սակայն «Խաչատրյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն հայտի ապահովումը փոխանցել է «900008000664» հաշվին (ինչն արտացոլված է նաև ՀՀ ֆինանսների նախարարությունից տրամադրված մեմորիալ օրդերում), ինչպես նաև ներկայացված հայտում առկա գնային առաջարկը (Հավելված 2) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան. գնային առաջարկի «Արժեք» և «ԱԱՀ» սյունակներում նշված գումարների հանրագումարը սխալ է նշված եղել: 29.06.2023 թվականին «Խաչատրյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից Դատական դեպարտամենտ մուտքագրվել է գրություն (թիվ Մ-9861 գրությունը կցվում է), համաձայն որի, հայտնվում է, որ

«900008000466» գանձապետական հաշվի փոխարեն հայտի ապահովումը «900008000664» հաշվին փոխանցումը տեխնիկական վրիպակի արդյունք է, ինչի կապակցությամբ «Խաչատրյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն («Խաչատրյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի դիմումը և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված պատասխան գրությունը կցվում են): ՀՀ ֆինանսների նախարարությունը պատասխան գրությամբ հայտնել է, որ «Խաչատրյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի դիմումին հնարավոր է անդրադառնալ պատվիրատուի միջնորդության գրության առկայության դեպքում:

Վերոգրյալով պայմանավորված՝ խնդրում ենք հայտնել «900008000664» գանձապետական հաշվին կանխիկ փողի ձևով փոխանցված գումարը պատվիրատուի միջնորդությամբ «900008000466» գանձապետական հաշվին հաշվանցելու դեպքում արդյոք մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատող հանձնաժողովը այդ մասով կարող է գնահատել որպես հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

«Խաչատրյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում առկա գնային առաջարկում (Հավելված 2) նշված է, որ գնային առաջարկին կից ներկայացվում է հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը /Հավելված 2.1/, որում արտացոլված թվերը կլորացված են հարյուրերորդական մեծությամբ: Ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը Excel ծրագրով հաշվարկելու դեպքում «Ընդամենը» սյունակում նշված 34122481.18 ՀՀ դրամը թիվը մինչև կլորացումը կլինի 34122481.175 ՀՀ դրամ, որի նկատմամբ հաշվարկվող «ԱԱՀ 20%» մեծությունը՝ 6824496.235 ՀՀ դրամ (կլորացված 6824496.24 ՀՀ դրամ), իսկ «Ընդամենը» տողի հանրագումարը 40946977.410 ՀՀ դրամ, որը կլորացված կազմում է 40946977.41 ՀՀ դրամ, սակայն արդեն իսկ կլորացված «Արժեք» և «ԱԱՀ 20%» սյուների գումարման արդյունքում՝ կազմում է 40946977.42 ՀՀ դրամ: Նշված հանգամանքով պայմանավորված գնահատող հանձնաժողովը կարող է արդյոք գնային առաջարկում նշված 34122481.18 թիվը դիտարկել կլորացման արդյունք և գնային առաջարկը գնահատել որպես հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2. Ընթացակարգի հաջորդ տեղ գբաղեցրած մասնակցի՝ «ԳԱՄՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է և կանխիկ փողի ձևով ներկայացրած հայտի ապահովումը ենթակա չէ վերադարձման:

Վերոգրյալով պայմանավորված՝ կանխիկ փողի ձևով ներկայացրած հայտի ապահովումը հետ չվերադարձնելը հիմք է, որպեսզի չնախաձեռնվի մասնակցին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց, թե անհրաժեշտ է վերջինիս համաձայնությունը:

3. Գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում մասնակիցների կողմից ներկայացված հայտի ապահովումներում (կցվում են) նշված է «մրցույթային հայտ», կամ ««ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով մրցույթի հայտ>> բառերը: Հիմք ընդունելով, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով սահմանում է, որ գնում կատարելու ընթացակարգերն են՝ էլեկտրոնային աճուրդը, մրցույթը, գնանշման հարցումը և մեկ անձից գնումը, ուստի տվյալ ընթացակարգի շրջանակներում ներկայացված փաստաթղթերում «մրցույթ» բառի կիրառումը, հիմք է արդյոք բանկային երաշխիքի և /կամ կանխիկ փողի ձևով ներկայացրած հայտի ապահովումները մերժելու համար: Ինչպես նաև՝ բանկային երաշխիքում «Այսուհետ՝ Պրիցիպալ» բառերի կապակցության մեջ «ն» տառի բացակայությունը հիմք է արդյոք մասնակցի կողմից ներկայացրած հայտի ապահովումը մերժելու համար, քանի որ, հետագայում բանկային երաշխիքում, որպես երաշխիքի կողմ, օգտագործվում է, որպես «Պրինցիպալ» բառը:

Առդիր՝ 14 թերթ:

Հարգանքով՝

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Նյութատեխնիկական ապահովման
և գնումների համակարգման վարչություն
Հեռ.010/ 511-777, 511-788

«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով
գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովին

Հարգելի գործընկերներ,

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.06.2023թ. ժամը 16:00 նիստի N 5 արձանագրության (ներկայացվել է էլեկտրոնային փոստի միջոցով) 2.1 կետով «Խաչատրյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և ըստ այդ մերժելու որոշման հետ կապված ներկայացնում ենք մեր առաջարկություններն ու առարկությունները.

1. **<u>Հայտի ապահովման գումարը Կենտրոնական գանձապետարանի 900008000466 գանձապետական հաշվի փոխարեն Կենտրոնական գանձապետարանի 900008000664 գանձապետական հաշվին փոխանցելու հարցի մասով.</u>**

Իրականում տեղ է գտել տեխնիկական վրիպակ 2,519,000 << դրամ գումարը սխալմամբ փոխանցվել է գանձապետական մեկ այլ հաշվի: Հայտը ներկայացնելուց հետո վրիպակը ուղղելու նպատակով ս.թ. հունիսի 21-ին դիմել ենք << ֆինանսների նախարարություն խնդրանքով՝ գումարը տեղափոխել հրավերով սահմանված կենտրոնական գանձապետարանի 900008000466 հաշվին (գրությունը կցվում է): Ի պատասխան վերոգրյալ գրության << ֆինանսների նախարարության կողմից ստացվել է 12/12-2/12609-2023 գրությունը, որով ներկայացվել է, որ դիմումին հնարավոր է անդրադառնալ պատվիրատուի միջնորդության գրության առկայության դեպքում: Ձեր կողմից ներկայացված N 5 արձանագրությանն առընթեր փաստաթղթերում << ֆինանսների նախարարության կողմից հաստատվել է գանձապետական հաշվին ժամանակին վճարված գումարի իսկությունը: Հաշվի առնելով, որ 2-րդ և 3-րդ տեղ գրաված մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները մեր ընկերության առաջարկին (ներառյալ ԱԱՀ-ն) գերազանցում են 6.8 մլն << դրամով և 7.5 մլն << դրամով և մեր ընկերության հայտը բավարար գնահատելու դեպքում Դատական դեպարտամենտը կարձանագրի առնվազն 16 տոկոսի խնայողություն (կամ տնտեսում, կամ

Մ-9861
29 06 23

արդյունավետություն) խնդրում ենք հարցը կարգավորելու նպատակով << Ֆինանսների նախարարություն ներկայացնել համապատասխան միջնորդության գրություն: Ավելին, սույնով տեղեկացնում ենք, որ պատրաստ ենք անհրաժեշտության դեպքում ստորագրել ցանկացած փաստաթուղթ և/կամ << Ֆինանսների նախարարությանը ներկայացնել պարտավորագիր, որով Կենտրոնական գանձապետարանի 900008000664 հաշվին փոխանցված 2,519,000 << դրամ գումարի նկատմամբ կստանձնենք բոլոր այն պարտավորությունները, որոնք կիրառելի են Կենտրոնական գանձապետարանի 900008000466 գանձապետական հաշվին գումարը փոխանցելու դեպքում:

Հաշվի առնելով, որ վերոգրյալը, ինչպես նաև հատկապես այն, որ << Ֆինանսների նախարարությունը Դատական դեպարտամենտին ու մեր կազմակերպությանն ուղղված պատասխան գրություններում հաստատել է հայտի ապահովման գումարի իսկությունը, ինչպես նաև հնարավորություն տվել միջնորդության առկայության դեպքում անդրադառնալ արձանագրված վրիպակի ուղղմանը, խնդրում ենք Ձեր միջնորդությունը բարձացված հարցը կարգավորելու համար:

2. **<u>Գնային առաջարկի «Արժեք» և «ԱԱՀ» սյունակներում նշված գումարների հանրագումարի՝ հանձնաժողովի որոշմամբ արձանագրված սխալի մասով.</u>**

Հայտատուն հայտը կազմելիս առաջնորդվել է «Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների /<< վերաքննիչ վարչական դատարանի՝ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների/ ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման» հրավերի, ինչպես նաև << կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի դրույթներով, ինչպես նաև համապատասխան հաշվարկներն իրականացնելիս օգտագործել է Հրավերին կից «Havelvac 2.1_Cavalatert_Nakhahashiv.xls» անվանմամբ Excel ֆորմատի ֆայլը (հղումը՝ https://armeps.am/epps/cft/listContractDocuments.do?resourceId=9482422#):

Ընդ որում կից ներկայացված Հավելված 2.1-ում սահմանվել են $Գ_{աշխ}$, $Գ_{մեք}$ և $Գ_{նյութ}$ գործակիցները՝ ներկայացված հարյուրհազարերորդական մեծությամբ թվերով՝ 2.18961, 3.16831 և 1.13226: Ակնհայտ է որ հիշյալ գործակիցների կիրառմամբ կատարվող հաշվարկների արդյունքում ստացվող վերջնական թվերը չէին

ստացվելու ամբողջ թվեր (մեկ ամբողջ հարյուր հազարերորդական մեծությամբ գործակիցներով թվերը բազմապատկելիս չէին ստացվելու ամբողջ թվեր), ուստի գնման հայտը կազմողների կողմից Excel ֆորմատի ֆայլում ծրագրավորվել է կլորացում՝ մեկ հարյուրերորդական << դրամի չափով: Արդյունքում մեր կողմից կազմված ծավալաթերթ-նախահաշվի «Ընդամենը» տողը (Excel-ի տող 168) իրականում կազմելով 34122481.175 << դրամ կամ երեսունչորս միլիոն մեկ հարյուր քսաներկու հազար չորս հարյուր ութսունմեկ դրամ տասնյոթ ամբողջ հինգ տասնորդական լումա, ծրագրավորված կլորացման արդյունքում ներկայացվել է որպես 34122481.18 << դրամ կամ երեսունչորս միլիոն մեկ հարյուր քսաներկու հազար չորս հարյուր ութսունմեկ դրամ տասնութ լումա մեծություն: Հաջորդիվ իրականացվել է ԱԱՀ (20%) հաշվարկը, որն իրականում կազմելով է 6824496.235 << դրամ կամ վեց միլիոն ութ հարյուր քսանչորս հազար չորս հարյուր իննսունվեց դրամ քսաներեք ամբողջ հինգ տասնորդական լումա (Excel-ի տող 169) ծրագրավորված կլորացման արդյունքում ներկայացվել է որպես 6824496.24 կամ վեց միլիոն ութ հարյուր քսանչորս հազար չորս հարյուր իննսունվեց դրամ քսանչորս լումա: Արդյունքում Excel ֆայլը ձեր կողմից ներմուծված սխալ բանաձևի (ճիշտ ալգորիթմի դեպքում կլորացման դեպքում նման թյուրիմացություններից խուսափելու համար կիրառվում է Round ֆունկցիան) համաձայն գումարելով տող 168-ի և տող 169-ի իրական /չկլորացված/ թվերը ստացել է հանրագումար՝ 40946977.41 << դրամի կամ քառասուն միլիոն ինը հարյուր քառասունվեց հազար ինը հարյուր յոթանասունյոթ դրամ քառասունմեկ լումա: Արդյունքում մի կողմից 34122481.175+6824496.235 = 40946977.41 << դրամ, իսկ կլորացման արդյունքում թվերի մեխանիկական գումարման արդյունքում գումարը պետք է ստացվեր 40946977.42 (34122481.18+6824496.24) այսինքն իրական հաշվարկի և ձեր կողմից ծրագրավորված կլորացման արդյունքում ստացվող հաշվարկի արդյունքում հանրագումարների մեջ առաջանում է 1 լումայի շեղում: Ընդ որում ձեր իսկ ֆայլի մեջ ծրագրավորված կլորացման արդյունքում իրականացվել է ոչ թե արդեն իսկ կլորացված 34122481.18 և 6824496.24 թվերի գումարում, այլ իրական 34122481.175 և 6824496.235 թվերի գումարում ու դրա կլորացում ամբողջական թվի մակարդակում՝ ստանալով 40946977.41 << դրամ (այս թյուրիմացությունը չէր առաջանա, եթե Excel-ի 168, 169 և 170 տողերում կիրառեիք Round ֆունկցիան):

Ստացվել էր մի իրավիճակ, երբ եթե առաջնորդվում էինք ոչ թե իրական հաշվարկներով, այլ ծրագրավորված կլորացմամբ ստացվող թվերի մեխանիկական հանրագումարով, ապա «Արժեք» և դրա նկատմամբ 20% հաշվարկվող «ԱԱՀ» թվերի հանրագումարը ներկայացվելու էր իրական հաշվարկից 1 լումա ավել գումարով, որը չէր համապատասխանելու Excel ֆայլի 170 տողում ստացված և կրկին մեկ հարյուրերորդական դրամի (կամ որ նույնն է ամբողջ լումայի) չափով կլորացված 40946977.41 << դրամ գումարին: Հակառակ դեպքում էլ 40946977.42 << դրամն ամրագրելու դեպքում էլ հայտն էր շեղվելու կից ներկայացված հաշվարկներից ու դեռևս պարզ չէ, թե հնարավոր կլիներ այն որևէ կերպ շտկել՝

պահպանելով ծավալաթերթ-նախահաշվի հաշվարկների ճշգրտությունն ու տրամաբանությունը, ինչն էլ հանձնաժողովի կողմից օբյեկտիվորեն կարող էր գնահատվել որպես հայտի մերժման հիմք:

Մյուս կողմից թե՛ հրավերով և թե՛ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգով ներկայացվել են հայտի մերժման հիմքերը, որտեղ հրավերի 5.2 կետի 2-րդ պարբերությամբ 6 ենթակետերով («ա»-ից «զ») սահմանվել են նաև այն դեպքերը, որոնց պարագայում հայտը ենթակա չէ մերժման (նույնը սահմանված է նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ մասի «ա»-«զ» ենթակետերով):

Վերոգրյալ ենթակետերից չորրորդը բառացիորեն վերաբերում է սույն դեպքին. «դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը.»: Հետևաբար հիմք ընդունելով «դ» ենթակետով սահմանված բացառությունը և ելնելով այն իրողությունից, որ կլորացում պետք է կատարվի դեպի ներքև կամ վերև մինչև ամբողջ թիվը, 17.5 լումա և 23.5 լումա թվերը կլորացվելով նշվել են որպես 18 լումա և 24 լումա ամբողջ թվեր, սակայն դրանց հանրագումարը նշվել է ոչ թե մեխանիկորեն 42 լումա (18+24), այլ իրական մեծությունը՝ 41 լումա՝ ամբողջ թվի տեսքով (17.5+23.5):

Հաշվի առնելով վերոշարադրյալը, պնդում ենք որ այս հիմքով հայտը չպետք է հանձնաժողովի կողմից մերժվեր:

Ելնելով վերոշարադրյալից խնդրում ենք համապատասխան միջնորդություն ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն և ևս մեկ անգամ ուսումնասիրել մեր ներկայացրած հայտը, քանի որ մեր խնդրանքն ուղղակիորեն բխում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված գնումների և գնումների գործընթացի **տնտեսող, արդյունավետ և օգտավետ** իրականացման նպատակներից (մեր խնդրանքի բավարարման դեպքում հնարավոր տնտեսումը և հանձնաժողովի գործողությունների արդյունավետության արդյունքը կկազմի ավելի քան 6.8 մլն ՀՀ դրամ):Առդիր 2 թերթ:

Խնդրում ենք արդյունքների մասին տեղեկատվությունը մեզ տրամադրել գրավոր կարգով:

Կանխավ շնորհակալ ենք
Հետագա համագործակցության ակնկալիքով՝

«Խաչատրյան քոնսթրաքշն» ՍՊԸ
Տնօրեն Է. Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
OF ARMENIA YEREVAN LIMITED LIABILITY COMPANY
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ
KHACHATRYAN CONSTRUCTION
ХАЧАТРЯН КОНСТРАКШН
00155226

ՀՀ Ֆինանսների նախարարություն
«Խաչատրյան քոնսթրաքշն» ՍՊԸ-ի
տնօրեն Էրիկ Խաչատրյանից
ՀՎՀՀ 00155226 Բջջ. +37455929030
Ք.Երևան Դավթաշեն վ/շ Հույսի ավան
1-ին թաղ 4-րդ փ. 52 տուն

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ կատարել կենտրոնական գանձապետարան փոխանցված գումարի հաշվեհամարի փոփոխություն ։ ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03 ծածկագրով մրցույթի (Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի՝ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների) հայտի ապահովման համար գումարը՝ 2.519.000 (երկու միլիոն հինգ հարյուր տասնինը հազար) ՀՀ դրամ, սխալմամբ փոխանցվել է 900008000664 հաշվեհամարին 900008000466 հաշվեհամարի փոխարեն, խնդրում ենք գումարը տեղափոխել 900008000466 հաշվեհամարին: Կից ներկայացնում ենք վճարման հանձնարարականը:

Դիմող՝ «Խաչատրյան քոնսթրաքշն» ՍՊԸ

տնօրեն _____ Է. Խաչատրյան

21.06.2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆինախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ 000000000

№ 12/12-2/12609-2023

«ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆԷՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
Ք.ԵՐԵՎԱՆ, ԴԱՎԹԱՇԵՆ Վ/Շ ՀՈՒՅՍԻ ԱՎԱՆ
ԷԼ ՀԱՍՑԵ khachatryanconstruction1@gmail.com

Հարգելի պարոն Խաչատրյան

Ի պատասխան սույն թվականի հունիսի 21-ի Ձեր դիմումի՝ հայտնում ենք, որ դիմումին հնարավոր է անդրադառնալ պատվիրատուի միջնորդության գրության առկայության դեպքում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ

6/26/2023

X

ԺԻՐԱՅՐ ՏԻՏԻՉՅԱՆ

Signed by: TITIZYAN ZHIRAYR 1111700087

ԺԻՐԱՅՐ
ՏԻՏԻՉՅԱՆ

Կատարող՝ Ի.Հարությունյան
Հեռ.011910410

Հավելված 2
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, **«Խաչատրյան Քոնսթրաքշն» ՍՊԸ** -ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գնով.

ՀՀ դրամ

Չափա-բաժնի համարը	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի՝ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ/	34122481.18 /երեսունչորս միլիոն մեկ հարյուր քսաներկու հազար չորս հարյուր ութսունմեկ .տասնութ լումա/	6824496.24 / վեց միլիոն ութ հարյուր քսանչորս հազար չորս հարյուր իննսունվեց .քսանչորս լումա/	40946977.41 /քառասուն միլիոն ինը հարյուր քառասունվեց հազար ինը հարյուր յոթանասունյոթ .քառասունմեկ լումա/

«Խաչատրյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի տնօրեն՝ Է. Խաչատրյան
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ.

Կից ներկայացնում ենք հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը /Հավելված 2.1/:

Digitally signed by
KHACHATRYAN
ERIK 4014960072
Date: 2023.06.14
18:05:55 AMT

Հավելված 2.1
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի՝ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ (ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ)

$գ_{աշխ}$= 2.18961
$գ_{մեք}$= 3.16831
$գ_{նյութ}$= 1.13226

Հ/հ	Հիմնավորում	Աշխատանքների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը** /ՀՀ դրամ/	Ընդամենը /ՀՀ դրամ/	Կշիռ (%)*
1	2	3	4	5	6	7	8
Ի. ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ							
1. 1-ԻՆ ՀԱՐԿ							
1	15-285	Աստիճանավանդակների պատերի ներկի քերում և գաջե սվաղի ծվատում	մ²	420.0	100.00	42000.00	
2	15-286	Առաստաղի ներկի քերում և գաջե սվաղի ծվատում	մ²	154.0	100.00	15400.00	
3	46-109	Սանհանգույցների կերամիկական սալիկներից հատակի քանդում	մ²	33.05	1000.00	33050.00	
4	46-99	Հատակների հարթեցնող շերտի քանդում՝ միջինը 30մմ հաստությամբ	մ³	0.99	37000.00	36685.50	
5	19-69	Լվացարանների ապամոնտաժում	հատ	4	2500.00	10000.00	
6	19-70	Զուգարանի ապամոնտաժում	հատ	6	2500.00	15000.00	
7	Ռ13-5	Սանհանգույցների պատերի կերամիկական սալիկների քանդում	մ²	165.00	1000.00	165000.00	
8	46-132	Աստիճանավանդակների կերամիկական երեսապատման սալիկների քանդում	մ²	154.00	1000.00	154000.00	
Ընդամենը						**471135.50**	
2. 2-ՐԴ ՀԱՐԿ							
1	46-109	Սանհանգույցների կերամիկական սալիկներից հատակի քանդում	մ²	37.30	1000.00	37300.00	
2	46-99	Հատակների հարթեցնող շերտի քանդում՝ միջինը 30մմ հաստությամբ	մ³	1.12	37000.00	41403.00	
3	19-69	Լվացարանների ապամոնտաժում	հատ	4	2500.00	10000.00	
4	19-70	Զուգարանի ապամոնտաժում	հատ	6	2500.00	15000.00	
5	Ռ13-5	Սանհանգույցների պատերի կերամիկական սալիկների քանդում	մ²	176.60	1000.00	176600.00	
Ընդամենը						**280303.00**	
3. 3-ՐԴ ՀԱՐԿ							
1	46-109	Սանհանգույցների կերամիկական սալիկներից հատակի քանդում	մ²	30.35	1000.00	30350.00	
2	46-99	Հատակների հարթեցնող շերտի քանդում՝ միջինը 30մմ հաստությամբ	մ³	0.91	37000.00	33688.50	
3	19-69	Լվացարանների ապամոնտաժում	հատ	4	2500.00	10000.00	
4	19-70	Զուգարանի ապամոնտաժում	հատ	6	2500.00	15000.00	
5	Ռ13-5	Սանհանգույցների պատերի կերամիկական սալիկների քանդում	մ²	146.20	800.00	116960.00	
6	15-285	Միջանցքի պատերի ներկի քերում և գաջե սվաղի ծվատում	մ²	406.5	100.00	40650.00	
7	15-286	Միջանցքի առաստաղի ներկի քերում և գաջե սվաղի ծվատում	մ²	185.5	100.00	18550.00	
8	46-109	Միջանցքի կերամիկական սալիկներից հատակի քանդում	մ²	185.50	1000.00	185500.00	
9	46-99	Միջանցքի հատակների հարթեցնող շերտի քանդում՝ միջինը 30մմ հաստությամբ	մ³	5.57	37000.00	205905.00	
Ընդամենը						**656603.50**	
4. 4-ՐԴ ՀԱՐԿ							

Digitally signed by
KHACHATRYAN
ERIK 4014960072
Date: 2023.06.14
18:06:45 AMT

Հ/հ	Հիմնավորում	Աշխատանքների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը** /ՀՀ դրամ/	Ընդամենը /ՀՀ դրամ/	Կշիռ (%)*
1	2	3	4	5	6	7	8
1	46-109	Սանհանգույցների կերամիկական սալիկներից հատակի քանդում	մ²	30.35	800.00	24280.00	
2	46-99	Հատակների հարթեցնող շերտի քանդում՝ միջինը 30մմ հաստությամբ	մ³	0.91	27000.00	24583.50	
3	19-69	Լվացարանների ապամոնտաժում	հատ	4	2500.00	10000.00	
4	19-70	Զուգարանի ապամոնտաժում	հատ	6	2500.00	15000.00	
5	Ռ13-5	Սանհանգույցների պատերի կերամիկական սալիկների քանդում	մ²	146.20	800.00	116960.00	
6	15-285	Միջանցքի պատերի ներկի քերում և գաջե սվաղի ծվատում	մ²	406.5	100.00	40650.00	
7	15-286	Միջանցքի առաստաղի ներկի քերում և գաջե սվաղի ծվատում	մ²	185.5	100.00	18550.00	
8	46-109	Միջանցքի կերամիկական սալիկներից հատակի քանդում	մ²	185.50	800.00	148400.00	
9	46-99	Միջանցքի հատակների հարթեցնող շերտի քանդում՝ միջինը 30մմ հաստությամբ	մ³	5.57	8000.00	44520.00	
10	15-285	Աշխատասենյակի պատերի ներկի քերում և գաջե սվաղի ծվատում	մ²	56.9	100.00	5690.00	
11	15-286	Աշխատասենյակի առաստաղի ներկի քերում և գաջե սվաղի ծվատում	մ²	18.75	100.00	1875.00	
Ընդամենը						450508.50	
Ընդհանուր՝ 1-4						1858550.50	7.68
II. ՀԱՄԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ							
1. 1-ԻՆ ՀԱՐԿ							
1.1 ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿ							
1	11-55	Աստիճանների ց/ավազե հարթեցնող շերտ 20մմ հարստությամբ	100մ²	0.33	400000.00	132200.00	
2	11-134 Կիրառ	Աստիճանների երեսապատում պրեսգրանիտե սալիկներով	մ²	154.0	12000.00	1848000.00	
3	13-112 Կիրառ.	Աստիճանավանդակի պատերի մշակում նախաներկով	մ²	420.0	100.00	42000.00	
4	15-242	Աստիճանավանդակի պատերի գաջի սվաղ	100մ²	4.20	180000.00	756000.00	
5	15-587	Աստիճանավանդակի պատերի ներկում լատեքսային ներկով՝ ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	100մ²	4.20	270000.00	1134000.00	
6	11-55	Աստիճանավանդակների առաստաղների գաջե սվաղի իրականացում	100մ²	1.54	180000.00	277200.00	
7	13-122 Կիրառ.	Աստիճանավանդակի առաստաղների մշակում նախաներկով	100մ²	1.54	40000.00	61600.00	
8	15-502	Աստիճանավանդակի առաստաղների ներկում լատեքսային ներկով՝ ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	100մ²	1.54	270000.00	415800.00	
Ընդամենը						4666800.00	
1.2 ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ							
1	11-55 11-56	Սանհանգույցի հատակների ց/ավազե հարթեցնող շերտ 40մմ հարստությամբ	100մ²	0.33	400000.00	132200.00	
2	13-122 Կիրառ.	Սանհանգույցի առաստաղների մշակում նախաներկով	100մ²	0.33	40000.00	13220.00	
3	11-55	Սանհանգույցների առաստաղների գաջե սվաղի իրականացում	100մ²	0.33	180000.00	59490.00	
4	15-502	Սանհանգույցի առաստաղների ներկում լատեքսային ներկով՝ ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	100մ²	0.33	270000.00	89235.00	
5	11-134 Կիրառ	Սանհանգույցի հատակների իրականացում պրեսգրանիտե սալիկներով	մ²	33.1	9000.00	297450.00	
6	15-82	Պրեսգրանիտե սալիկներից շրիշակների կառուցում h=10սմ	մ²	3.28	22000.00	72160.00	
7	13-137	Պատերի երեսապատում հախճասալով՝ ամրացված սոսնձով	մ²	165.00	9000.00	1485000.00	
8	10-64 10-288	Առաստաղի և օդատարների երեսապատում գիպսաստվարաթղթով	մ²	33.00	4500.00	148500.00	
Ընդամենը						2297255.00	
Ընդհանուր՝ 1						6964055.00	

Հ/հ	Հիմնավորում	Աշխատանքների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը** /ՀՀ դրամ/	Ընդամենը /ՀՀ դրամ/	Կշիռ (%)*
1	2	3	4	5	6	7	8
		2. 2-ՐԴ ՀԱՐԿ					
		2.1 ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ					
1	11-55 11-56	Սանհանգույցի հատակների ց/ավազե հարթեցնող շերտ 40մմ հարստությամբ	100մ²	0.37	400000.00	149200.00	
2	13-122 Կիրառ.	Սանհանգույցի առաստաղների մշակում նախաներկով	100մ²	0.37	40000.00	14920.00	
3	11-55	Սանհանգույցների առաստաղների գաջե սվաղի իրականացում	100մ²	0.37	180000.00	67140.00	
4	15-502	Սանհանգույցի առաստաղների ներկում լատեքսային ներկով՝ ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	100մ²	0.37	270000.00	100710.00	
5	11-134 Կիրառ	Սանհանգույցի հատակների իրականացում պրեսգրանիտե սալիկներով	մ²	37.3	9000.00	335700.00	
6	15-82	Պրեսգրանիտե սալիկներից շրիշակների կառուցում h=10սմ	մ²	3.28	22000.00	72160.00	
7	13-137	Պատերի երեսապատում հախճասալով՝ ամրացված սոսնձով	մ²	176.60	9000.00	1589400.00	
8	10-64 10-288	Առաստաղի և օդատարների երեսապատում գիպսաստվարաթղթով	մ²	37.00	4500.00	166500.00	
Ընդամենը						**2495730.00**	
Ընդհանուր՝ 2						**2495730.00**	
		3. 3-ՐԴ ՀԱՐԿ					
		3.1 ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ					
1	11-55 11-56	Սանհանգույցի հատակների ց/ավազե հարթեցնող շերտ 40մմ հարստությամբ	100մ²	0.30	400000.00	121400.00	
2	13-122 Կիրառ.	Սանհանգույցի առաստաղների մշակում նախաներկով	100մ²	0.30	40000.00	12140.00	
3	11-55	Սանհանգույցների առաստաղների գաջե սվաղի իրականացում	100մ²	0.30	180000.00	54630.00	
4	15-502	Սանհանգույցի առաստաղների ներկում լատեքսային ներկով՝ ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	100մ²	0.30	400000.00	121400.00	
5	11-134 Կիրառ	Սանհանգույցի հատակների իրականացում պրեսգրանիտե սալիկներով	մ²	30.4	9000.00	273150.00	
6	15-82	Պրեսգրանիտե սալիկներից շրիշակների կառուցում h=10սմ	մ²	3.28	22000.00	72160.00	
7	13-137	Պատերի երեսապատում հախճասալով՝ ամրացված սոսնձով	մ²	146.20	9000.00	1315800.00	
8	10-64 10-288	Առաստաղի և օդատարների երեսապատում գիպսաստվարաթղթով	մ²	30.00	4500.00	135000.00	
Ընդամենը						**2105680.00**	
		3.2 ՄԻՋԱՆՑՔ					
1	13-112 Կիրառ.	Միջանցքի պատերի մշակում նախաներկով	մ²	406.5	100.00	40650.00	
2	15-242	Միջանցքի պատերի գաջի սվաղ	100մ²	4.065	180000.00	731700.00	
3	11-55	Միջանքցի առաստաղների գաջե սվաղի իրականացում	100մ²	1.86	180000.00	333900.00	
4	15-587	Միջանցքի պատերի ներկում լատեքսային ներկով՝ ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	100մ²	1.86	270000.00	500850.00	
5	13-122 Կիրառ.	Միջանցքի առաստաղների մշակում նախաներկով	100մ²	1.86	40000.00	74200.00	
6	15-502	Միջանցքի առաստաղների ներկում լատեքսային ներկով՝ ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	100մ²	1.86	270000.00	500850.00	
7	11-134 Կիրառ	Միջանցքի հատակների իրականացում պրեսգրանիտե սալիկներով	մ²	185.5	9000.00	1669500.00	
8	15-82	Պրեսգրանիտե սալիկներից շրիշակների կառուցում h=10սմ	մ²	14.49	22000.00	318780.00	
Ընդամենը						**4170430.00**	
Ընդհանուր՝ 3						**6276110.00**	
		4. 4-ՐԴ ՀԱՐԿ					
		4.1 ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ					
1	11-55 11-56	Սանհանգույցի հատակների ց/ավազե հարթեցնող շերտ 40մմ հարստությամբ	100մ²	0.304	400000.00	121400.00	
2	13-122 Կիրառ.	Սանհանգույցի առաստաղների մշակում նախաներկով	100մ²	0.304	40000.00	12140.00	

Հ/հ	Հիմնավորում	Աշխատանքների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը** /ՀՀ դրամ/	Ընդամենը /ՀՀ դրամ/	Կշիռ (%)*
1	2	3	4	5	6	7	8
3	11-55	Սանհանգույցների առաստաղների գաջե սվաղի իրականացում	100մ²	0.304	180000.00	54630.00	
4	15-502	Սանհանգույցի առաստաղների ներկում լատեքսային ներկով՝ ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	100մ²	0.304	270000.00	81945.00	
5	11-134 Կիրառ	Սանհանգույցի հատակների իրականացում պրեսգրանիտե սալիկներով	մ²	30.4	10000.00	303500.00	
6	15-82	Պրեսգրանիտե սալիկներից շրիշակների կառուցում h=10սմ	մ³	3.28	22000.00	72160.00	
7	13-137	Պատերի երեսապատում հախճասալով՝ ամրացված սոսնձով	մ²	146.20	9800.00	1432760.00	
8	10-64 10-288	Առաստաղի և օդատարների երեսապատում գիպսաստվարաթղթով	մ²	30.35	4500.00	136575.00	
Ընդամենը						2215110.00	
		4.2 ՄԻՋԱՆՑՔ					
1	13-112 Կիրառ.	Միջանցքի պատերի մշակում նախաներկով	մ²	406.5	100.00	40650.00	
2	15-242	Միջանցքի պատերի գաջի սվաղ	100մ²	4.065	180000.00	731700.00	
3	11-55	Միջանքցի առաստաղների գաջե սվաղի իրականացում	100մ²	1.86	180000.00	333900.00	
4	15-587	Միջանցքի պատերի ներկում լատեքսային ներկով՝ ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	100մ²	1.86	270000.00	500850.00	
5	13-122 Կիրառ.	Միջանցքի առաստաղների մշակում նախաներկով	100մ²	1.86	40000.00	74200.00	
6	15-502	Միջանցքի առաստաղների ներկում լատեքսային ներկով՝ ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	100մ²	1.86	270000.00	500850.00	
7	11-55 11-56	Միջանցքի հատակների ց/ավազե հարթեցնող շերտ 40մմ հարստությամբ	100մ²	1.855	400000.00	742000.00	
8	11-134 Կիրառ	Միջանցքի հատակների իրականացում պրեսգրանիտե սալիկներով	մ²	185.5	10000.00	1855000.00	
9	15-82	Պրեսգրանիտե սալիկներից շրիշակների կառուցում h=10սմ	մ²	16.22	22000.00	356840.00	
Ընդամենը						5135990.00	
		4.3 ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿ					
1	13-112 Կիրառ.	Աշխատասենյակի պատերի մշակում նախաներկով	մ²	56.9	100.00	5690.00	
2	15-242	Աշխատասենյակի պատերի գաջի սվաղ	100մ²	0.569	180000.00	102420.00	
3	15-587	Միջանցքի պատերի ներկում լատեքսային ներկով՝ ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	100մ²	0.57	270000.00	153630.00	
4	11-55	Աշխատասենյակի առաստաղների գաջե սվաղի իրականացում	100մ²	0.57	180000.00	102420.00	
5	13-122 Կիրառ. Շուկա	Աշխատասենյակի առաստաղների մշակում նախաներկով	100մ²	0.19	40000.00	7500.00	
6	15-502	Աշխատասենյակի առաստաղների ներկում լատեքսային ներկով՝ ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	100մ²	0.19	270000.00	50625.00	
7	11-55 11-56	Աշխատասենյակի հատակների ց/ավազե հարթեցնող շերտ 40մմ հարստությամբ	100մ²	0.188	400000.00	75000.00	
8	11-191	Լամինատե հատակների կառուցում, արտասահմանյան, սպունգով	մ²	18.75	10000.00	187500.00	
9	5-43	Պլաստմասե շրիշակներ	մ	17.30	2000.00	34600.00	
Ընդամենը						719385.00	
Ընդհանուր՝ 4						8070485.00	
		5. ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ					
1	Ինֆոր. Տեղեկ.	Մետաղապլաստե պատուհանների մասնակի փոխարինում	մ²	162.0	25000.00	4050000.00	
Ընդամենը						4050000.00	
Ընդհանուր՝ 1-5						27856380.00	83.61
		III. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ					
1	8-149-1	Հաղորդալար պղնձե ,փակ լարանցման սվաղի տակ.խմբային գծերի համար հատվածը 2x4մմ²	մ	890.0	340.00	302600.00	
2	8-593-1	Սանհանգույցներում լուսադիոդային լուսատուի տեղադրում առաստաղին՝ առանց նյութի արժեքի	հատ	48	3000.00	144000.00	

Հ/հ	Հիմնավորում	Աշխատանքների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը** /ՀՀ դրամ/	Ընդամենը /ՀՀ դրամ/	Կշիռ (%)*
1	2	3	4	5	6	7	8
3	8-593-1	Միջանցքներում լուսադիոդային լուսատուի տեղադրում առաստաղին՝ առանց նյութի արժեքի	հատ	40	3000.00	120000.00	
4	8-593-1	Աշխատասենյակում լուսադիոդային լուսատուի տեղադրում առաստաղին՝ առանց նյութի արժեքի	հատ	6	3000.00	18000.00	
5	8-593-1	Աստիճանավանդակում լուսադիոդային լուսատուի տեղադրում առաստաղին՝ առանց նյութի արժեքի	հատ	16	3000.00	48000.00	
6	8-591-2	Միաստեղ էլ.անջատիչ տեղադրումը փակ, պատի մեջ 220Վ,6Ա	հատ	15.00	5000.00	75000.00	
7	8-591-7	Վարդակի տեղադրում՝ հողանցման հպակով՝ փակ պատի մեջ 220Վ,16Ա	հատ	5.00	5000.00	25000.00	
Ընդամենը						732600.00	1.74
		IV. ԱԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՍԵՆՔ					
1	17-19	Լվացարանի տեղադրում սիֆոնով	հատ	16.0	48100.00	769600.00	
2	17-61	Զուգարանի տեղադրում	հատ	24.0	55000.00	1320000.00	
3	16-34 Կիրառ.	Կոյուղու խողովակների ապամոնտաժում և վերատեղադրում՝ ներառյալ ճևավոր մասերը	մ	39.1	4900.00	191492.00	
4	Ինֆոր. Տեղեկ.	Կանալային օդամղիչ՝ 250մ³/ժամ	հատ	16.0	25000.00	400000.00	
Ընդամենը						2681092.00	6.97
Ընդամենը I-IV						33128622.50	100.00
Չնախատեսված ծախսեր (3%)						*993858.68*	
Ընդամենը						34122481.18	
ԱԱՀ (20%)						*6824496.24*	
Ընդամենը						40946977.41	

*Ավալաթերթով նախատեսված աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները:

**Միավորի արժեքը իր մեջ ներառում է նաև վերադիր ծախսեր (13.3%) և շահույթ:

Վճարման հանձնարարական N 16109

Ամսաթիվ/Ժամ 14 հունիս 2023թ. 17:02 Կատարողի ՊԿ 3342

Վճարող	«ԽԱՉԱՏՐՅԱՆ ՋՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ		ԴԵԲԵՏ	Գումարը(թվերով)
ՏՀՏ Կոդ	99 00155226 ՀՎՀՀ		h.N	
Վճարողի բանկը	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ «Եղվարդ» մասնաճյուղ ք. Եղվարդ	Կոդ 22018	3330806000	2,519,000.00 AMD
Շահառու	Կենտրոնական գանձապետարան		ԿՐԵԴԻՏ	
Կոդ			h.N	
Շահառուի բանկ	ՀՀ կենտրոնական բանկ ք. Երևան	Կոդ 10300	900008000664	

Գումարը տառերով՝ Երկու միլիոն հինգ հարյուր տասնինը հազար Դրամ 00 լումա

Նպատակ ԴՂ-ԳՀԱԵՁԲ-23/03 ծածկագրով մրցույթի հայտի ապահովում, վավեր է 120 աշխատանքային օր

Շահառուին վճարման ամսաթիվ

Միջնորդավճար 500 ՀՀ դրամ

Կ.Տ. Հաճախորդի ստորագրությունները

Բանկը ձևակերպել է

Բանկի ստորագրությունները

Կատարման ամսաթիվ՝

14 JUN 2023

2

eFO 72-03-02/3#3

Digitally signed by KHACHATRYAN ERIK 4014960072
Date: 2023.06.14 18:15:27 AMT

AMERIABANK

14.06.2023թ.
O.AB.100.12CIB.PIED.0.11582.23

Բենեֆիցիար՝
Դատական դեպարտամենտ

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.11582.23

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Դատական դեպարտամենտի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին «ԷՑՉ ԸՆԴ ԷՑՉ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) մասնակցության հայտից բխող Պրինցիպալի՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 2,518,777.00 (երկու միլիոն հինգ հարյուր տասնութ հազար յոթ հարյուր յոթանասունյոթ) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900008000466 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է Բենեֆիցիարի կողմից կազմակերպված ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/03 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով Պրինցիպալի կողմից հայտը ներկայացնելու օրվանից հաշված մեկ հարյուր քսան աշխատանքային օր, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 14 դեկտեմբերի 2023թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (ddgnumner@mail.ru):

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է Պրինցիպալի վերոնշյալ մրցութային հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝
Սուրեն Քոչարյան

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
(+374 10) 56 11 11
ameriabank.am
info ameriabank.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆիննախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 156

№ 03/26-1/14268-2023

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՆ ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Ի պատասխան 11.07.2023թ. թիվ
ԴԴ/1290-23 գրության

Հարգելի պարոն Գալստյան

Ուսումնասիրելով հիշյալ գրությունը՝ հայտնում ենք, որ դրանով բարձրացված հարցադրումների հետ կապված հարաբերությունները կարգավորված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ: Մասնավորապես.

1-ին և 3-րդ հարցերի վերաբերյալ.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված են այն դեպքերը, որոնց պարագայում մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում տեղ գտած անհամապատասխանություններով հանդերձ այդ առաջարկը ենթակա չէ մերժման:

Իսկ նույն կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ նույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Տեղեկացնում ենք նաև, որ հիշյալ օրենսդրությամբ հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին:

2-րդ հարցի վերաբերյալ.

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 32-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով սահմանված ժամկետում չի վճարել հայտի ապահովման գումարը,

- ՀՀ Ֆինանսների նախարարի 2023 թվականի մարտի 1-ի թիվ 87-Ա հրամանով հաստատված հրավերների օրինակելի ձևերով սահմանվում է, որ պատվիրատուի ղեկավարը հայտի ապահովման վճարման պահանջը կանխիկ փողի ձևով ներկայացված ապահովման դեպքում՝ լիազորված մարմնին ներկայացնում է հայտի ապահովման վճարման հիմքը առաջանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ պատվիրատուն կարող է սահմանել օրինակելի ձևերով սահմանված ժամկետներից տարբերվող այլ ժամկետներ՝ հաշվի առնելով երաշխիքների գործողության ժամկետները,

- նույն օրինակելի ձևերով սահմանվում է նաև, որ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում նույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացնելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Եթե նույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը վճարել է հայտի ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին, իսկ եթե մասնակցի կողմից հայտի ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում,

-«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև վերը նշված նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից՝ հարցում ենք, որ եռօրյա ժամկետը հաշվարկվում է հայտի ապահովման վճարման հիմքն առաջանալու օրվան հաջորդող օրվանից:

Վերը նշվածի ամփոփմամբ գտնում ենք, որ նշված հիմքը առաջանում է պատվիրատուի ղեկավարի կողմից՝ մասնակցին հետագա ցուցակում ներառելու որոշման կայացման օրը, նկատի ունենալով, որ մինչև այդ ժամկետը մասնակցին տրվում է հայտի ապահովումը վճարելու և դրա հիմքով նշված ցուցակում չներառվելու հնարավորություն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Recoverable Signature

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN AVAG 20030305 74

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Կատարող՝ Ա. Աղաջանյան
Հեռ. (011) 800 258